ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 437/19
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՋՆԱՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 11.07.2019

"ՏՐԱՆՍԻՄՊԵՔՍ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, (այսուհետ՝ Կատարող) ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ղազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրությանը համաձայն, մի կողմից և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Մ.Բաղդասարյանի, ով գործում է նախարարության կանոնադրությանը համաձայն, մյուս կողմից (երկու կողմերը միասին հիշատակվելու դեպքում՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել 1.2. կետով նախատեսված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց:

1.2. Կատարողը Պատվիրատուի անունից իրականացնում է Պատվիրատուին հասցեագրված (ուղարկված) կամ Պատվիրատուի անունից առաքվող բեռների մաքսային հայտարարագրում՝ գործող մաքսային օրենսդրությանը համապատասխան և դրա հետ կապված անհրաժեշտ այլ ծառայություններ (այսուհետ նաև՝ Ծառայություններ):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողն իրավունք ունի՝

2.1.1 Պատվիրատուից նախապես, ինչպես նաև Ծառայությունների կատարման ընթացքում պահանջել և ստանալ Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր,

2.1.2 Անհրաժեշտության դեպքում մինչև հայտարարագրման գործընթացն սկսելը՝ զննել Պատվիրատուին հասցեագրված կամ Պատվիրատուի անունից առաքված բեռները՝ կազմելով զննման արձանագրություն,

2.1.3 Պատվիրատուից պահանջել կատարելու օրենսդրությամբ նախատեսված մաքսային վճարները,

2.1.4 Պատվիրատուից պահանջել՝ իր կողմից ներկայացված հաշվին համապատասխան վճարել մատուցված Ծառայությունների դիմաց,

2.1.5 Պատվիրատուից պահանջել հատուցելու ոչ հավաստի տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու հետևանքով Կատարողի կրած վնասները,

2.1.6 Միակողմանի կասեցնել պայմանագրային պարտականությունների կատարումն այնքան ժամանակ, քանի դեռ Պատվիրատուի կողմից չեն կատարվել հայտարարագրման համար անհրաժեշտ հանձնիպական պարտականությունները (պարտավորությունները): Նշված դեպքում հնարավոր իրավական հետևանքների համար, այդ թվում՝ իրավասու մարմինների կողմից կիրառվելիք տուժանքների (տույժեր, տուգանքներ և հարկադրանքի այլ միջոցներ) պատասխանատվությունը կրում է Պատվիրատուն: Եթե նշված միջոցները որևէ սուբյեկտի կողմից որևէ հիմքով կիրառվում են Կատարողի նկատմամբ, ապա Պատվիրատուն պարտավորվում է դրանց չափով հատուցում տրամադրել Կատարողին կամ միջոցներ ձեռնարկել Պատվիրատուի նկատմամբ նման միջոցների չկիրառման կապակցությամբ:

2.2 Կատարողը պարտավորվում է՝

2.2.1 Պատվիրատուի անունից առաքված կամ Պատվիրատուին հասցեագրված բեռները հայտարարագրել գործող օրենսդրությանը համախատասխան,

2.2.2 Պատվիրատուին տեղեկացնել առաքվող կամ հասցեագրված բեռների հայտարարագրման հնարավոր մաքսային ընթացակարգերի պայմանների և պահանջների մասին, որից հետո անմիջապես Պատվիրատուն ընտրում է մաքսային ընթացակարգերի տեսակները և պայմանները՝ անհապաղ տեղեկացնելով Կատարողին,

2.2.3 Պատվիրատուի անունից առաքված կամ Պատվիրատուին հասցեագրված թեռները հայտարարագրել Պատվիրատուի ընտրած մաքսային ընթացակարգով,

2.2.4 Պատվիրատուի պահանջով Պատվիրատուի անունից և Պատվիրատուի հաշվին կատարել ապրանքների սերտիֆիկացում, ապահովել տեղեկանքներ և այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ՀՀ մաքսային տարածքում ապրանքների օպերատիվ և անարգելք ձևակերպման համար,

2.2.5 ՀՀ մաքսային մարմիններում, իրականացնել Պատվիրատուի անվամբ ներմուծվող, արտահանվող թեռների հետ կապված անհրաժեշտ գործողություններ:

2.3 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1 Կատարողից պահանջել Ծառայությունների պատշաճ կատարում,

2.3.2 Հրաժարվել Կատարողի կողմից մինչև հայտարարագրման գործընթացն սկսելը հնարավոր իրականացվելիք զննումից, որի դեպքում հայտարարագրումն իրականացվում է իր կողմից տրամադրված փաստաթղթերին համապատասխան: Հայտարարագրման տվյալների հավաստիության և դրանից բխող բոլոր հնարավոր հետևանքների համար պատասխանատվությունը կրում է Պատվիրատուն,

2.3.3 Կատարողից պահանջել Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն՝ առանց միջամտելու Կատարողի կողմից իրականացվող բնականոն գործունեությանը:

2.4 Պատվիրատուն պարտավորվում է՝

2.4.1 Կատարողին նախապես, ինչպես նաև Ծառայությունների կատարման ընթացքում տրամադրել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր,

2.4.2 Օրենքով նախատեսված ժամկետներում կատարել մաքսային ձևակերպման ընթացքում անհարաժեշտ մաքսային վճարները,

2.4.3 Ընտրել թեռների հայտարարագրման մաքսային ընթացակարգիտեսակը՝ անհապաղ տեղեկացնելով Կատարողին,

2.4.4 Կատարողի կողմից մաքսային ձևակերպման ավարտից հետո ներկայացված հաշվին համապատասխան՝ վճարել մատուցված Ծառայությունների դիմաց:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1 Պայմանագրի գինը Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների դիմաց վճարն է:

3.2 Վճարումն իրականացվում է կանխիկ կամ փոխանցումով՝ ներկայացված հաշվին համապատասխան:

3.3 Ներկայացված հաշվին համապատասխան վճարման ենթակա գումարը յուրաքանչյուր դեպքում պայմանավորված է մատուցվող Ծառայությունների բնույթից և ծավալից:

3.4 Պատվիրատուն վճարում է մատուցված Ծառայությունների դիմաց մաքսային ձևակերպման ավարտից հետո՝ Կատարողի կողմից ՀՀ օրենսդրության համապատասխան ներկայացված հարկային հաշվի (հաշվարկային փաստաթղթի կամ այլ փաստաթղթի) համապատասխան: Պայմանագրի 3.4 կետովնախատեսված վճարումն իրականացվում է 3.4 կետով նախատեսված հաշիվը ներկայացվելուց հետո 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Կատարողը պատասխանատու է իր կողմից կազմված զննման արձանագրությանը համապատասխան Ծառայությունների մատուցման համար:

4.2 Կատարողը պատասխանատվություն չի կրում ապրանքների հայտարարագրման ոչ ժամանակին իրականացման համար, եթե նման ուշացումը պայմանավորված է վարչարարություն իրականացնող մարմնի գործողությունների կամ հայեցողական լիազորությունների կիրառման հետևանքով:

4.3 Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև Պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված դեպքում Կատարողը պատասխանատվություն չի կրում, եթե առաջացած անբարենպաստ հետևանքները պայմանավորված են Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության և փաստաթղթերի ոչ ամբողջական և ոչ ճշգրիտ լինելով:

4.4 Պատվիրատուն պատասխանատու է իր կողմից Կատարողին տրամադրվող տեղեկատվության և փաստաթղթերի իսկության ու ամբողջականության համար: Տրամադրված տեղեկատվության և

փաստաթղթերի ոչ ճշգրիտ կամ ոչ ամբողջական լինելու ամբողջ պատասխանատվությունը և դրանց հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքները կրում է Պատվիրատուն:

4.5 Պատվիրատուն կրում է մաքսային ձևակերպման ընթացքում մաքսային վճարները օրենսդրությամբ սահմանված չափով և ժամանակին չկատարելու հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքների պատասխանատվությունը:

4.6 Կատարողն իրավունք ունի Պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված վճարումների ուշացված յուրաքանչյուր օրվա համար Պատվիրատուից պահանջել վճարել տույժ՝ վճարման ենթակա գումարի 0.3 (զրո ամբողջ երեք տասնորդական) տոկոսի չափով:

5. ԱՅԼՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Պատվիրատուն լիազորում է Կատարողին՝ Պատվիրատուի անունից և հաշվին, կատարել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլորգ որոնողություններ:

5.2 Այն դեպքում, երբ Կատարողի կողմից կազմված զննման արձանագրությամբ հայտարարագրվող բեռների տվյալները տարբերվում են Պատվիրատուի կողմից նախապես տրամադրված տեղեկատվության և փաստաթղթերի տվյալներից, ապա բեռների հայտարարագրումն իրականացվում է՝ հիմք ընդունելով զննման արձանագրության տվյալները:

5.3 Պայմանագրի 5.2 կետով նախատեսված դեպքում, եթե Պատվիրատուն հրաժարվում է բեռների հայտարարագրումն իրականացնել, հիմք ընդունելով զննման արձանագրության տվյալները, ապա այդ դեպքում Կատարողն իրավունք ունի միակողմանի հրաժարվել պայմանագրի կատարումից, որի պարագայում Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի նկատմամբ կամ իրականացնել հայտարարագրումը Պատվիրատուի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա, որի դեպքում հնարավոր բոլոր հետևանքների համար պատասխանատվությունը կրելու է Պատվիրատուն:

5.4 Կողմերն իրավասու չեն Պայմանագրով նախատեսված իրենց իրավունքներն ու պարտավորությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց մյուս կողմի գրավոր համաձայնության: Կողմերն իրավասու են Պայմանագրի պայմանները կատարելու համար երրորդ անձին տրամադրել լիազորագիր՝ իրանունից և հանձնարարությամբ հանդես գալու համար:

5.5 Պայմանագրի գործողության շրջանակներում Կողմերից յուրաքանչյուրը մյուս կողմից տրամադրված տեղեկատվությունը, որն անկախ ձևից կարող է պարունակել երրորդ անձանց անհայտ տեխնիկական, ֆինանսական, առևտրային, կազմակերպչական և այլ տեղեկատվություն՝ երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, պարտավորվում է չբացահայտել կամ այլ կերպ չտրամադրել երրորդ անձանց:

5.6 Պայմանագրի վաղաժամ լուծման դեպքում Պայմանագրից հրաժարվող կողմը մյուս կողմին, ինչպես նաև Պայմանագրի 5.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է փաստացի կատարված ծախսերի դիմաց, ինչպես նաև մինչև մյուս կողմին Պայմանագրի վաղաժամ դադարեցման մասին հայտնելու պահը ծառայությունների համար վճարված գումարի 30 (երեսուն) տոկոսը:

5.7 Պատվերի կատարման անհնարինության մասին նախազգուշացումը հավասարազոր է սույն պայմանագրից միակողմանի հրաժարմանը: Այս դեպքում Կատարողը Պատվիրատուի նկատմամբ որևէ պարտավորություն, այդ թվում՝ ֆինանսական, չի կրում:

5.8 Պայմանագրի փոփոխություններն ու լրացումները կատարվում են գրավոր ձևով:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1 Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճեր լուծվում են դատական կարգով՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԸ

7.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխա-

տեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են տարերային աղետները, երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, սահմանների փակումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.2 Կողմը, որն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտավորությունները, պարտավոր է արտակարգ հանգամանքների (անհաղթահարելի ուժի), առաջացման և վերացման մասին 7 (յոթ) օրվա ընթացքում պատշաճ ձևով ծանուցել մյուս կողմին: Արտակարգ հանգամանքների (անհաղթահարելի ուժի) առկայության մասին մյուս կողմին չտեղեկացնելը կամ ուշ տեղեկացնելը կողմին զրկում է հետագայում դրանք վկայակոչելու իրավունքից:

7.3 Եթե արտակարգ հանգամանքների (անհաղթահարելի ուժի) ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերն իրավունք ունեն լուծել Պայմանագիրը՝ նախապես տեղեկացնելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

8.2 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

8.3 Պայմանագրի կնքման պահից ուժը կորցրած են համարվում պայմանագրի կնքման նպատակով կողմերի միջև վարված բոլոր բանակցությունները, որոնք չեն ամրագրվել Պայմանագրով:

8.4 Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ լուծել պայմանագիրը՝ այդ մասին ոչ ուշ քան 10 (տասը) օր առաջ գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

8.5 Պայմանագրից ծագած վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտատեր կողմի գրավոր համաձայնության:

8.6 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 1 (մեկ) տարի ժամկետով: Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագիրը շարունակում է գործել այնքան ժամանակ, մինչև Կողմերից որևէ մեկը կտեղեկացնի մյուս կողմին Պայմանագրի դադարեցման մասին:

9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
"ՏՐԱՆՍԻՄՊԵՔՍ" ՍՊԸ	ՀՀ տարածքային կառավարման և
ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 54, բն. 81	ենթակառուցվածքների նախարարություն
ՀՎՀՀ՝ 00051849	ք. Երևան, Կառավարական տուն 3
Հ/Հ 001 066687 001	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
"Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան" ՓԲԸ	Հ/Հ 900011019073
	ՀՎՀՀ 02578338
Տնօրեն՝	Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
_____/Ս. Ղազարյան	_____/Ծ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ